

22. ՂԱԶԸԵՐ ՊԱՀՈՂ ՏՂԱՆ

Մնում ա, չինում մին մարթ, մինգյել մին կնեգյ։ Տահանք էրկու տղա յա ինում՝ մինը շատ քյոք, մինն էլ շատ մաշված, ոնրանք էլ շատ տիժեր ին ապրում։ Շատ բիզիրիլան նան էտ մարթը մին օր տոնը-տրեղը հըվաքում ա, կլոխ յոր օնում, քյինում, վրեր շոռ կյա, լավ ապրուստ, ըխշադանք քթենա։

Մին քանի օրան հետը տունս ըն կյամ ժողու դրաղ, տրեղ էլ մին մրեծ տոն ա պըտահում, մաչին էլ մարթ չի ինում կընալիս։ էտ մարթը կնեգյը նան խոխեքյը յոր ա օնում, նի մնում էտ տոնը, տրեղ կենում։

Հենգյ-վեց ամես վրեր անց ա կենում, մին մարթ ա կյամ, տրան թա՝ հի՞նչ իրավունքավ ըս նի մտալ իմ տոնըս, մաչին կենում։ էտ մարթը կարում չի տրա ջողրը տա։ Տնատարը թա՝ լավ, դե վրեր տրեղ չօնես կընալի, տղորանցրտ մինն ինձ տո, տոնըս քե տամ։ էտ մարթը վրեր շատ մտածում ա, վրեչ մին պեն կարում չի ասե, տնատարը թա գյունդում ըմ, վրեր մաշված տղատ ըս ինձ տրլական, տամ ըս, տո, ես պիտի քյինամ հեռու տրեղ։

էտ մարթը ճարը կտրած, մաշված տղեն տամ ա տրան։ Տա յել տղան յոր ա օնում, քյինամ։ Քյինամ ըն, քյինամ, տունս ըն կյամ մին շատ հեռու երգյիր։ Տղան հղեենի քամակ ա ինգյում, վրեր ըխպրան հուր խմե։ Մին դուշ կյամ ա տրա կլխավը թոչում, տղեն ասում.—էտ մարթը քեզ տանում ա քյուքրցնե, մորթե, օտե. քեզ քցըլնկան ա մին սընդողու մաչ, հացըտ, ճանրըտ ընդեղ տա, ամեն շերեթ էլ սընդողեն դաթավը ժիժիլնըտ տունս օնել տա, եշի, թա տրեանա հիշքա՞ն ըս քյուքացալ. տղերքատ մին վրեճարու

լոլակ թթի, ծրեռքետ պահեն, վրեր ասեն ծիծիյնըտ նշանց տու, էտ լոլակը տուն կոնեա, նշանց տաս. հունց ըրա, վրեր տու ուրեն թյալնոգ կյաս. էահինչ տրեղն էլ մին քարու տակեն էրկու ծիյու մաղ կա, էն էլ տուն կոնեա, ցուրումըտ պահնա, վրեր հարկավրեր ինի, ուրուր կըքսնա, հրեգեն ծին տուն ա կլիլնկան առաչըտ. էտ մարթին կլոխը վրրելան նոր կըքլինա ուրան կոխկեն տոնը, նրա պատան վարար նուր ա տուա քցում, տրեղ էլ մին լավ կըլըզանաս, լոսի փուխվըլական ըս, ուժլզանաս, դիշինգյանաս։

էտ մարթը տրան տանում ա մին հեռու տրեղ։ Տրան մին տոն էլ ըստրեղ ա ինում։ էտ տղեն քցում ա մին սընդողու մաչ, ամենեն օր հացը, նուրը էտ սընդողեն մին դաթավը տամ։ Վրեր վախտ էլ կյամ ա, թա ծիծիյնըտ տուն կալ տրեսնամ, տա վրեմարեն լոլակը տուն ա օնում, նշանց տամ։ Տղան սընդողումը վրեր շատ կենում ա, էլ կարում չի տիմանա, մին օր էլ ծիծիյնեն ա տուն օնում, նշանց տամ։ էտ մարթը տրեսնում ա, վրեր տղան լավ թյուքացալ ա, սանդողը պեց ա անում, տուն օնում, հանցու տանեն քցի թուրունը, խրրավեն համոր ըրած ա ինում, օգում ա հաց թխե, թաժա հացավ տղեն խրավաց մրեան օտեն։ Տղեն տանում ա թուրունը, տեսիր տամ ուրան, ասում՝ կըռաց հաց թխե։ Տղան էլ թա՝ ես հաց թխած չըմ, գյուղում. չըմ հունց ըն թխում, տու կռաց մինը թխե, ես էլ նշիմ, սովրեցնեմ։ էտ մարթը պունը նոր ա անում, քցում տեսեն յիրա, կռանում, վրեր թուռնեն պատան տա, տղան քոն յա տամ, տրան քցում թուրունը, էրում, ըսպանում։ Տրանա նոր տանը տոնիրը պեց ա անում, տրեսնում հինչ հարստություն, էլ վրեսկես վրե՞ն ա, արծաթըս, ըրելյանտրս վրերը, ըխշարքես տակեն հինչ թինգյանկան պեներ ասես, տրեղ կա։ Մինգյել նշում ա, տրեսնում պատին մին ընգյունան նուր ա կյամ։ Նորերը հանում ա, նի մենում էտ հիրին տակեն լղանում, ամենեն հինչ փոխվում ա, զուվաթավ ա տրեռնում, իրեսը դիշինգյենում ա, մազերը կռուզնում, վրսկըքյաքյոլ տրեռնում։

էտ տանը վրեսկան մին չամադան յոր ա օնում, հղե ինում, վրեր քյինա ուրեն հորն ու մորը կոշտը։ Հղեննի սուվրեանում ա։ Նշում ա, տրեսնում մին չորան վրեմարեն սուրուն քշած, պիրում ա։ Զուրաեն մուտանում ա, պարյոր տամ, նոնան էլ թա՝ պա ես հղըցավուր մարթ ըմ, սուվրեցալ ըմ, վրեմարեներատ մինը մորթե, խրավե, օտում, հիշքան փող ասես, կըռամ։ Զորանը մին քյոր վրեմար ա մորթում, կրակ անում, խրավում։ Տա օտում ա, վրեմարեն հախը տամ, թափանը յոր օնում. թափ տամ, թարս իրեսեն յիրա պրանում, կլոխը քաշում, հղե ինում, քյինում։

Հրդեհի մին ճեղաց ա պրտահում, քշտին էլ մին համամ։ Թաքավորերն ըխճըկեյքը կյամ ին տրեղ լղանում, քյինամ։ Էտ ըխճըկորանցան էլ էրկունը փսակված ըն ինում, մինը՝ ազատ։ Էտ տղան ճըղրսպանեն անա հրցընում ա, թա ըստեղ ինձ նեքյար չը՞ն յոր օնել։ Ճըղասպանը խաբարը հացընում ա Թաքավորերն, Թաքավորերն էլ ասում ա՝ եր կալիքյ, Թողեքյ ղազերը պահե։ Տրան ճըղացումը ղըզարած ըն յոր օնում, տանում ար ամմեն օր ղազերը պահում, պիրում։

Մին օր էլ եշում ա, տրեսնում Թաքավորերն ըխճըկեքյը եկալ ըն կյեսը, լղանում ըն։ Տա Թաքուն քյինամ ա շորերը հանում, վըխճարեն Թափանը կըլխան տոնա օնում, տրեռնում մին զաշանգյ, վըսկըքյաքյոնլ տղա, նի մننում կյեսը, ըխճըկորանցը նհետ լղանում։ Վըեր կյեսան տոնա ըն կյամ, Թաքավորերն կուճուր ախճիգյը քվորցը նհետ ասում ա.—Էս քյիննական ըմ էտ տղեն։ Քուվերքը տրա յիրա ծիծաղում ըն։ Խաբարը քյիննամ ա պալատ, պիրին-պերան անց կենում, հանում Թաքավորերն, Թա կուճուր ախճիգյըտ օղում ա քյինա ճըղացեն ղզըրածեն։ Թաքավորը կզնըվում ա, հրաման տամ, վըեր ըխճըկանը հարամ անեն, պրլատան տոնա քցին։ Տի յել անում ըն։ Ախճիգյը քյիննամ ա էտ տղեն կոշտը, հաբը, մարը, քուվերքը լոխ իրես ըն շոռ տամ, վըեչ քյիննամ ըն, վըեչ կյամ։

Հունց ա պրտահում, կոխկե երգյիրին Թաքավորը էս Թաքավորերն յիրա կռև ա եր կենում, կյամ ամմեն հինչ քըրըհոդ անում։ Թաքավորերն էրկու փրսեեեն, Թաքավորը ամեքյա ուրանց զորքավը տոնա ըն կյամ, ճըխըպուրթ տրեռնում, զոռավ կըլխրեեն պրծըցնում։ Էտ տղան էլ շուրան էրկու մաղը տոնա ա օնում, ուրուր քանում, հրեղան ծին ուրան վըեսկե յիհարավը, ջիլավավը, զենքերավը, ամմեն հինչավը կյամ ա ըռաչին վըեեեը կենում։ Տա կլխեն Թրփանեն կաշին յոր ա օնում Թող անում, ծիյին յիրա կապած շորերը կյեեում, փափաղը տինում, զենքերը կապում, ծին նստում, քյիննամ կռև։ Հիշքան ինքյն ա կտորում, էրկու էնքան էլ ծին ա կտորում։ Էնքան ա կտորում, վըեր կռև եկած Թաքավորերն ուրան զորքան մնացած մին քանի հոգին յոր ա օնում, փախճում, զոռավ կլոխը պրծըցնում։

Մին քանի օրան հետը էտ Թաքավորերը նորըմինան ա զորք հըվաքում, եր կենում կյամ կռև։ Էս մին Թաքավորերն փրսեեեն ուրանց զորքավը տոնա ըն կյամ, նորից ըռնըճիճեխ տրեռնում, նա

տրեռնում։ Էտ տղան էլլա յա մազերն ուրուր քսում, հրեղան ծին կլամ ա կոշտը, նստում ա քյինամ կռև նկած Թաքավորերեն զորքը հրխրպուրթ անում, էտ տրեռնում կլամ։ Թաքավորը գյուդում չի, Թա տա հո՞ւ վա։ Իրեքինչի դեռնումն էլ էտ Թաքավորը վրեր կռև ա կլամ, նորբմինան ա զոռ անում, էլլա էտ տղան կլամ ա տրա զորքը նտ տամ, կռվումը տրա կուռանը Թխում ըն, յարալու անում, Թաքավորեն ուրեն յալլեխը տուռա ա օնում, յարան կապում, ա-բուռնը վրեննը կրցրնում։

Կովան նոր Թաքավորը հիվրնդանում ա։ Հինչ անում ըն, ա-նում չըն, կարում չըն լուվրցնեն։ Թաքավորեն ասում ա.—Վրեր բրխբրու մրնա ինի, օտեմ, կրլուվանամ։ Փրսեննեն քյինամ ըն վ-երս, շոռ ըն կլամ, վրեր բախրա քթեննեն, ըսպանեն, կարում չըն։ Էտ տղան քյինամ ա մին բախրա վրեր քցում, կլեղում, մին վիրի էթ էլ վրեր քցում տինում հղրցեն դրաղեն։ Թաքավորեն փրսեննեն կլամ ըն տրան պրտահում, զաչանք-պրղատանք անում, Թա հինչ օգնա, կրտանք, մեննակ Թա էտ էթը մրեզ տո, իրբսեներես օնեննքյ, տաեննքյ։ Էտ տղան ասում ա.—Թուղեցեքյ տունդումբրեներես յիրա փիչատ տինիմ, ծրեզ տում, տարեքյ։ Ծահանք մտածում ըն, մտածում, փիչատ տինիլ տամ, էթը յոր օնում, քյինամ։

Թաքավորեն էթին մրեսը վրեր օտում ա, իվիլի յա ծրեզբրա-նում։ Շատ տրղերա յըն ամմեն հինչու մրնա պիրում, օտում ա, վրեչ մինեն էլլա օգութ չի անում։ Թաքավորեն կուռուր ախեիգյը մին բմանում բրխբրեն մրսան շինած խորագյ ա պիրում, հարե օգում ա Թա նտ տա, կնեգյը Թա լավ, որ կալ, կոզի ինքյը փիս, քու հարազատ ախեիգյրտ ա։ Թաքավորը յոր ա օնում մին քանի Թիքյա սրտրմա ինիլավ օտում, լուվանում, նտնան կուռուր փրսեն ծեն տամ, տա ել հոխտ մազերն ուրուր ա քսում, հրեղան ծին ուրեն շուրերավը նան զենքերավը կլամ ա կոշտը, վրիռարեն Թա-փանը կլխան տուռա ա օնում Թոզ անում, ծիլին մաշկը կապած շո-ռերը կլենում, զենքերը կապում, ծին խրդրցնելավ քյինամ Թա-քավորեն կոշտը։ Թաքավորը տրան հրցրնում ա, Թա՝ տու հու վը՞ս, տա Թա՝ նտ քու կուռուր փրնատ ըմ։ Ցարալու ծրեռքը նտ ա անում, ասում.—Էս քու յալլե՞խտ ա, Թաքավորը Թա՝ հա՛։ Տա Թա՝ սահանք էլ քու փրսեննետ ըն, վրեր տունդումբրեներեն յիրա փիչատ ըմ տիրալ, էթը տումալ ուրանց, պերալ ըն։

Վերջը, Թաքավորը հրվատում ա, վրեր տա ուրեն փրնատ ա։ Պիրում ա էն էրկու փրսեննուցը շուրբրեն հանել տամ, եշում, տրեռնում տունդումբրեներեն յիրա փիչատ տիրած։ Դեռատին տա-

հանց կտորել ա տամ, մին մըտծ քյեփ սարքում, էտ տղեն էլ ասում.—Ես արտեն պըռավալ ըմ, էս թաքավըրոթունն էլ մենակ քեզ ա լայաղ, օրաս ետը երգյիրը ծըռոքըտ կալ, տու կառավարե։ Տղան թա՝ ես էհինչ տըեղը հար, մար, ախպըեր օնեմ, քյինամ պիրիմ, ետնան։ Թաքավըերը թա՝ քյինա՞ պեր։ Էտ տղան քյինամ ա հորը, մորը, ախպորը հըվաքում, պիրում տըեղ, ախպորը տանում հա՞մին ճիրին տակեն լըղըցնում, տո՞ւս ա կյամ ուժըղացած, դիշինգյանցած, փընթ ունրան ախպորը մնան վըսկըքյանքյունլ տըեռած, վըեր կյամ ա թաքավըերեն ըխճըկանը կոշտը, գյունդունմ ա թա ունրան նշանածն ա, դանտին պոռշը ճաքում ա։ Վըեբրը, էտ տղան ունրան հորը նան մորը նհետ կյամ ա թաքավըրոթունը յոր օնում, ըսկսում երգյիրը կառավարելը։